



## 57. ԱՐՎԵՍՈՒ ԱԽՊԵՐՈՒԹՅԵՆ

Կեղի խողածին, կիբա չոլ տաշտի մեց: Դողե մի կը շինա, կերպա, կը նըստի ուր հօդեն վե, աղվես ախաբեր կը գան, կասա. «Խողածին ախաբեր, հե՞ր ես նըստե դան, ետա չոլի մեց, ետա տաշտի մեց, տիւ խողածին ես, գյելեր տը գան, քյե ուտեն»:

Կասա. - Մը՝ վախենա, ես էլեր եմ ծե ախաբեր, էկեր եմ դըրկեցութեն տ'էնեմ:

Աղվես կասա. - Ես չըխո քաւ հետեվ կան կը գյեր, պարով, խազար պարով ես էկի:

Խողածին կասա. - Աղվես ախաբեր, ես ծեզի կազեր, ծեր դըրկեցութեն լավ ա, ես հազ չըրեցի դըրկըցներուց, էկա չոլի մեց իմ հօդեն շինեցի, եղա ծեր դըրկեց:

Կասա. - Խողածին ախաբեր, ետա չոլի մեց մենք կապըրենք, մեր տեղեն ա, տիւ, օր էկար ըստեղ, չըխո տ'էլնիս մեր ախաբեր: Ո՞ր պըտի եղի մեր ճոչ ախաբեր:

Են կը թալա էնոր վիզ, են կը թալա էնոր վիզ: Են կասա՝ տիւ տ'էղիս, են կասա՝ տիւ տ'էղիս:

Գյել մըտավ տուն, ասաց. - Ախապըրնե՛ր, ես ինչ ժողովք ա, ի՞նչ քըսա յա, ձիկ էլ հիմցուցեք, եսն էլ ձեր ախաբերն եմ, ես տը խասկընամ:

Աղվես կասա. - Չուր մըկա Աստղված մե խողածին ախաբեր չըտըւեր էր, ետու, մըկա խողածին ախաբեր էկեր ա չոլի մեց նըստի, ենի էրիր ենք չըխո մեր ախաբեր: Մըկա մեր ճոչ ախաբեր տ'ընդրինք:

Խողածին ախաբեր կասա. - Աղվես թ'եղի ճոչ ախաբեր:

Աղվեսն էլ կասա. - Վզր ծի ճոչ կա, գյել թ'եղի ճոչ ախաբեր: Գյելն էլ կասա. - Չէ՛, վալա՛, տի՛ եղիր:

Ետա զըրուցի մեջ առ կը գա, կասա. - Ախաբըրնե՛ր, ետա ի՞նչ քըսա յա:

Աղվես կասա. - Ա՛ռչ ախաբեր, ի՞նչ քըսա յա, Աստղված մե ախաբեր մ'ա տըլվեր: Մըկա կուզենք՝ մեր ճոչ ախաբեր խողածին եղի:

Առ կասա. - Եսն էլ ծե ախաբեր:

Են կասա՝ տիւ եղիր, են կասա՝ տիւ եղիր, հիրարու պատիվ կը պըօնեն, կը պերեն, կը կայնցուցեն առչու վերեն:

Կը նըստին կը զըրուցին, կը զըրուցին, կը զըրուցին, առուժ ախաբեր կը մըտի ներս:

Կասա. - Դա՛յ ախաբըրներ, ետա մարթ հի՞ւստ ա:

Աղվես կասա. - Եսի Աստղվածն ա տըլվեր մեզի ախաբեր:

Աղվես կասա. - Մըկա ժողովքյ ենենք, մեր ճոչ ախաբեր ո՞ր մեկ տնենքյ:

Գյել ախաբեր կասա. - Առ ախաբեր էնենք մեր ճոչ:

Խողածին կը մընչի, ծեռ կը դնի ակընչին:

Առուժ կասա. - Դա՛յ խողածին, հե՞ր չըզըրուցես, մեր ճոչ ախաբեր դուն ես:

Խողածին կասա. - Զի չըխասի զըրուց, ես մեհվան եմ, նոր եմ էկե:

Գյել կասա. - Ախաբըրնե՛ր, չուր մըկա ես չըզըրուցի, հրաման կա, ես էլ զըրուցեմ: Քերեկվից տիւքյ ժողովքյ եք տըրի, տիւ ծի չըխառցընեքյ, գյել ախաբեր, զըրուցի՛, յան պա՛մ ասա, չէ՛ ես լե ծեր ախաբերն եմ:

Առ կասա. - Հրաման ա, զըրուցա՛ դիրիս:

Կասա. - Ես կը զըրուցեմ, համա խողածին ախաբեր ի՞նչըխ ա էկե, ի՞նչըխ չէկի, մենքյ չըխառցընենքյ:

Առուժ ախաբեր կասա. - Նորեն տը խառցընենքյ, գիրար տեսեր ենքյ, խընդալուց դաշմիշ ենքյ էրե:

Գյել ախաբեր կասա. - Դեսօր հեվարման խառցում տ'էնենքյ:

Աղվես ախաբեր կը թըռի, կէլի կայնի, կասա. - Մեզի տան ճոչ տնենքյ:

Աղվես ախաբեր օր կը թըռի, կասա. - Մե ճոչ ախաբերըն տնենքյ:

Գյել էնդիհեն կասա. - Աղվես ախապեր, հրաման քհն ա, տիւ  
ինչ գյիտես, ենա՞լ էրա:

Աղվես կը կանչա. - Առուծ ախապեր, տիւ հե՞ր չըզըրուցիս,  
զըրուցա՛, հրաման ա, հե՞ր չըզըրուցես, ճոչ ախապեր տիւն ես:

Առուծ ախապեր ասաց. - Մեզի հօդի տեր հարկավոր ա, մեզի  
հօդա եղավ, ճոչըն լազըմ ա, օր մեր տուն չավիրի, հառեճ էրա:  
Չուր մըկա մեզի ավահի չըկեր, չոլի մեչ ենք, պետք ա դորիս մե  
ճոչ տմնենք:

Խողածին ախապեր ասաց. - Ամլա չեղիր, քյըֆա թալինք, հըմ  
վըր վե՞ր ընգի:

Քյըֆեն թալեցին, ընգավ վըր աղվես ախապոր:

Աղվես ախապեր ասաց. - Ես պըստիկ եմ, իմ խոսք չընցիր  
վըր ծի, գյել ախապեր օր ոըկի, փամփըմ կը զարկա, իս կը մընամ  
գյետին:

Գյելն ասաց. - Հրաման առչուն ա:

Առչն ասաց. - Հրաման աղվըսուն ա:

Աղվեսն ասաց. - Հրաման իմն ա, լե իմ խոսք չընցի:

Առչուն ասաց. - Ոըկիս, քաւրի գիմփըմ կը զարկիս, ես կը  
մեռիմ, չըմ կանա քհ հառեճ թիմանա:

Քյըֆա թալեցին, էկավ ընգավ վըր առուծ ախապոր:

Առուծ ախապեր ասաց. - Օր քյըֆեն էկավ, կայնավ վըր ծի,  
իյանք պատերազմ:

Խողածին ասաց. - Իյանք, ո՞ր մեկի դիխեն իյանք:

Աղվես ախապերն ասաց. - Իյանք, կանենք երթեն:

Առչ ախապերն ասաց. - Մեր մեչ հիմըստուն աղվեսն ա, ինչ  
օր էնոր հրաման էնա, մենք էնոր հրամանի տըկեն չէլնենք:

Խողածին կասա. - Մեր մեչ խելքյով աղվեսն ա, մեր ճոչ  
առուծն ա:

Առուծ կասա. - Ես կէլի վերուց խով կէնիմ, հրաման կէնիմ:

Աղվես կասա. - Մենք իյանք, կանինք ընտեղ, օր մեկ օր  
կողորավ, էնու օգյընութեն կը տանք:

Յէլան, գացին:

Խողածին կասա. - Ես իմ թուր կը կապեմ վըր ծի, կը խեծիմ  
իմ ծիու վերեն, ենալ օր ես կը ճարտիմ, ենալ մ'էլ իմ ծին թալաֆ  
կէնա:

Առուժ կասա. - Ես վերուց խով կէնիմ, ծեզի չըխին, տիւ էնտեղ պատերազմ էրեք:

Աղվես ասաց. - Ախադրնե՛ր, կանե՛ք մե ժողովքյ գա: Մի խամար թարհու պատրաստենքյ: Ես ու խողածին ետ կը մընանքյ, մենքյ պըստիկ ենքյ: Մեր բիրինջի թարհու առչն ա ու գյել: Առչ ու գյել հառեճ տ'իյան, մենքյ ետ կը մընանքյ, եփ օր առչ, գյել կողըրվան էկան վըր մե, մենքյ նոր կը քշենքյ հառեճ: Չըխու առուժ ախապեր վերուց կիյա, ենոր պատերազմ վերուց ա:

Առուժ ախապեր վերուց հըոշ էրեց, ասաց. - Դե գացե՛քյ, ել մը՝ կանեքյ, մըր մեռնելու օր հեսօր ա:

Աղվես ախապեր տըկանց ասաց. - Առուժ ախապեր, մի հեսօր անունըմ ըստանանքյ:

Առչ ու գյել հըշշ էրին, գացին, կողըրվան: Աղվես ախապեր, խողածին, առուժ ախապեր տառցան, էկան ետ:

Առուժ ախապեր ասաց. - Ախադրնե՛ր, ամլա ախապերութեն կէնեքյ, մենքյ թողինքյ գյել ախապեր ու առչ ախապեր սպանվան, մենքյ փախանքյ, էկանքյ:

Աղվես ախապեր էն դիեն թըռավ, ասաց. - Չըխու իմ պանին ամլա կը գա, օր ես կանամ, քյեզ էլ կը տամ կոտորել:

Առուժ ախապեր ասաց. - Իմ ախապերներ տըվիր կոտորել, մըկա տառցիր ես վըր ծի: Բերախտութեն մ'ընիր, օր բերախտութեն էնես, ես քյե շոտ կը կուրիսեմ:

Մընջավ...

Առուժ ախապեր ասաց. - Տըղե՛քյ, մենքյ բաս ա մըզզունքյ ըստա:

Աղվես ախապեր ասաց. - Ի՞նչ էնենքյ:

Առուժ ախապեր ասաց. - Էրթանքյ պատերազմ, մեր ախապոր ավդ էնենքյ, թոլ խանենքյ:

Աղվես ախապեր ասաց. - Էլե՛քյ, իյանքյ, յա՞ն Աստըված տը տա մե, յա՞ն էնոնց:

Ելան, գացին:

Խասան պատերազմի մեջ, աղվես ախապեր ասաց. - Առուժ ախապեր, մենքյ հեսօր իրեքյ ենքյ, մեկ տեղ տը կանինքյ, տիւ հեսօր տը չէլիս վեր: Իմ մեկ կուշտ խողածին թ'ընգի, մեկել տիւ ընգիր, առուժ ախապեր, ես կինգիմ մեչ:

Աղվեսն ասաց. - Դե՛, ախադրնե՛ր, հազըրվե՛քյ:

Են տեղ առուժ ախաբեր հըռշ էրեց, գացին: Առուժ ախաբեր զարկվավ: Աղվես ու խողածին տանցան, էկան:

Նստան, մաղթեք էրին, ասին. - Ի՞նչըլս էմենքյ: Մենքյ մընացինք էրկու էսա չոլի մեչ:

Աղվես ախաբեր տանցավ, ասաց. - Մենքյ մընացինքյ էրկուս, մենքյ ենքյ էսա տուն շինի, մենքյ մընացինքյ մեր տընով էրկուս, հառածի խիմ մենքյ ինք թալի, մեր տուն ա: Յառաճ անգամին ինչըլս օր էղավ, ախաբեր, անցկուն մենքյ տ'ապրովենքյ, չուր մեր օրըն մախու, վո մեկ օր մեռավ, են տանի տնա խոդ:

Ժամանակըմ ամլա կապըրվին:

Աղվես ախաբեր ասաց. - Դիրիս մի տանտիկին լազըմ ա, ես կերթամ քյե կին մ' ուզիմ:

Աղվես գյընաց ճաղաց:

Ճաղցալնին ասաց. - Թոգրի՝ ախաբեր, ի՞նչ կէնես:

Ճաղցալնի ախչիկ առեց խաց, էկավ ճաղաց:

Աղվես օր ախչիկ տեսավ, խավճավ, հելավ, կաց պարով էրաց, գյընաց:

Գյընաց, մարթու կըլըդ մըտավ, էկավ, ասաց. - Պա՛րև քյե, ճաղցըպան ախաբեր:

Ճաղցըպան ասաց. - Աստծու պարին, աղվես ախաբեր:

Աղվես ասաց. - Տիւ ի՞նչ գյիտեր, ես աղվես է:

Ասաց. - Ես գյիտեր չըխու տիւ աղվես էր:

Ասաց. - ճաղցըպան ախաբեր, տիւ գյիտե՞ս ես՝ ինչի՞ խամար եմ էկի:

Ասաց. - Ես ի՞նչ գյինամ, ես ի՞նչ գյիտեմ՝ քի սըռտի մեչ ի՞նչ կա:

Ասաց. - Ես էկեր եմ, պարեկնութեն կուզեմ:

Ասաց. - Էկեր ես իմ ախչիկ կուզես քի ախպի՞ր:

Ասաց. - Ի՞:

Ճաղցըպան ասաց. - Դե, օր անցկուն ի, ես կերթամ, ջույար կը տամ տուն, իմ խոր, մոր կամքյ առնեմ, գամ:

Ասաց. - Թ'եղի, ես կը մընամ ըստա, տիւ գյընա:

Ճաղցըպան տիւր էսիր ու գյընաց:

Աղվես անոթեր էր, էլավ ճաղցի թիզեր կը լիզեր:

ճաղցըպան գյունաց, առավ էրկու շում, եկավ վզը տըռան,  
ասաց. - Աղվե՛ս ախապեր, հելի՛ տէկւ՝ խոսանքյ, մեր պարեկմութեն  
ենենք:

Աղվես ախապեր էլավ տէկւ:

ճաղցըպան ասաց. - Եկա՞ր:

Ասաց. - Խա՛, վալա՛, եկա:

Շըներ էրող, լարեցին հետեվ, պըռնեցին:

Խողածին մընաց մենակ, ասաց. - Ոզ չըկըտրա, ջանըվըր-  
ներ չըխո ծի ախապերութեն չըն էնի, տ'ելնիմ, էրբամ իմ դըրկեց-  
ներու մոտ:

Էլավ, տուն պանցեց, գյունաց:

